ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԵՐԿՓՈՒԼ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

(Փոփոխված տարբերակ)

«Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ
0014 Հայաստան, Երևան, Ադոնցի 10Բ,
Հեռ. 24 50 99; ֆաքս՝ 24 51 99
Հայտարարության սույն տեքստը հաստատված է "ՄԷԿ" ՓԲԸ ԿԳՄ 2014 թվականի մարտի 12-ի նիստի
որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն
Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ «1-ТПиР-2013-МЭК**»**

Պատվիրատուն՝ «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ, որի հասցեն է ք. 0014 Հայաստան, Երևան, Ադոնցի 10Բ, հայտարարում է բաց երկփուլ ընթացակարգով գնում:
Բաց ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել պայմանագիր՝ **«**Երևան ՀԷԿ-1-ի վերակառուցման՝ ներառելով հիդրոտուրբինային սարքավորումներ, էլեկտրատեխնիկական սարքավորումներ, ՏԳԿԱՀ, Երևան ՀԷԿ-ի կայանային հանգույցի կառույցները և շինությունները**»** Կապալի պայմանագրի գործողության մոտավոր ավարտը նախատեսված է 2016 թ. դեկտեմբերի 31-ը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անձինք:

Մասնակիցները պետք է բավարարեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված որակավորման չափանիշների պահանջները: Ընտրված մասնակցին որոշելու համար կկիրառվի հայտերի բացման և գնահատման մասին «Գնումների մասին» ՀՀ օրենքով և "ՄԷԿ" ՓԲԸ կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին Կանոնադրությունով սահմանված կարգը:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն հրավերը (մրցութային փաստաթղթերը) թղթային տեսքով ստանալու համար, անհրաժեշտ է գրավոր դիմել պատվիրատուին հետևյալ հասցեով՝ "Միջազգային Էներգետիկ Կորպորացիա" ՓԲԸ / Հայաստանի Հանրապետություն, 0014, ք.Երևան, փող. Ադոնցի 10 Բ, հեռախոս՝ 24 50 99, ֆաքս՝ 24 51 99, e-mail՝ *office@mek.am* , վճարելով 600 000 ՀՀ դրամ գումար՝ "Միջազգային Էներգետիկ Կորպորացիա" ՓԲԸ դրամարկղ կամ Հ/Հ 1570012654440100 - "Ամերիաբանկ" ՓԲԸ;

Երևան ՀԷԿ-1-ի վերակառուցման ծրագիրը ֆինանսավորվում է ADB և EBRD կողմից: Մասնակիցներին նաև կարող են ներկայացվել լրացուցիչ պայմաններ:

Երկփուլ բաց ընթացակարգի առաջին փուլում մասնակիցները պետք է ներկայացնեն նախնական մրցութային հայտերը, որոնք պարունակում են տեխնիկական առաջարկություններ, մոտավոր գներով, մոտավոր հաշվարկներով վերընշված հասցեով, մինչև 2014 թվականի ապրիլի 23-ի, ժամը 16:00:

Մրցույթի Պատվիրատուն մինչև 2014 թվականի ապրիլի 30-ը կգնահատի մասնակիցների համապատասխանությունը մրցութային պահանջներին, ինչպես նաև առաջարկության էությունը երկրորդ փուլի վերջնական տեխնիկական հանձնարարությունների և մրցութային փաստաթղթերի ձևավորման նպատակով: Երկրորդ փուլին կմասնակցեն հասցեական հրավերքներ ստացած մրցութային պահանջներին համապատասխանող մասնակիցները:

Երկփուլանոց բաց ընթացակարգի երկրորդ փուլի մասնակիցներից, որոնք ստացել են հասցեական հրավերքներ, պահանջվում է ներկայացնել վերջնական հայտեր - տեխնիկա-առևտրային առաջարկները *վերոնշված հասցեով մինչև* 2014 թվականի *հունիսի 11*-ի, ժամը 16:00*:*

Հայտերը բացվում են Ընկերության ԿԳՄ նիստում՝ վերջնական հայտերի ներկայացման վերջնաժամկետին հաջորդող օրը՝ *2014 թվականի հունիսի 12-ին, ժամը 10:00-ին:*

Մասնակիցների որակավորման տվյալների՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին՝ համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Բարսեղյանին, 010 24 50 99 հեռախոսահամարով:

Գլխավոր տնօրեն Ա.Գրիգորյան